


ԳՐԱԽՈՍԱԿԱՆՆԵՐ

BOOK REVIEWS



ՍԱՀԱԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

**ՀԱՄՇԵՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ
ՁԵՌԱԳՐԵՐՈՒՄ**

Երևան, ԵՊՀ հրատ., 2019, 363 էջ:

Համշենի և համշենահայության մասին առկա բավական պատկառելի գրականությունը համալրվեց ևս մեկ աշխատությամբ, որը եթե վերջինն է ըստ հերթականության, ապա վերջինի այն իրավունքով, որը շարունակում և ամբողջացնում է հիմնահարցի մշակման արժեքավոր կողմերը և ներկայացնում իբրև նոր որակ: Աշխատությունն այս իմաստով տրոհվում է բազմաթիվ ծալքերի և ժամանակի, և թեմայի հաղթահարման տեսակետից, և այստեղ ևս աչքի են զարնում հեղինակային նպատակադրման ամբողջականացումը, հետազոտական լուրջ խնդիրները, որոնք առաջադրվել են հետևողականորեն և ուսումնասիրության նյութի մեջ խորանալու հմտությամբ:

Հենց սկզբից ասենք, որ այս երկուսից և մեկը, և մյուսը հենվում են ուսումնասիրության առարկայի համոզիչ իմացության, երկար տարիների աշխատանքի և փորձի արդյունքների վրա: Ճանաչողական և իմացական այս կողմը, կարծում եմ, պայմանավորել է շարադրանքի ընթացքն ու ներքին տրամաբանությունը, Համշենի մշակույթի ներկայացումը՝ իր էական հատկանիշներով և ապա, վերջիններիս միջոցով, այդ գավառի հայերի պատմության վերարտադրությունը՝ սկսած հայոց պատմության վաղնջական ժամանակներից ընդհուպ մինչև մեր օրերը: Հեղինակի այս մոտեցումը ակնհայտ կայու-

Սահակյան Լուսինե, Համշենը հայկական ձեռագրերում

նություն ունի՝ անկախ աշխատության գլուխների թելադրած հատվածական սահմանափակումներից, Համշենի գավառը, նրա պատմությունն ու մշակույթը գրքում ներկայացվում են մեկը մյուսի հերթագայությամբ, միմյանց ազդեցված և մեկը մյուսի մեջ, որպես միաձույլ մի կառույց: Եթե աշխատության առաջին գլուխը հայտ է ներկայացնում Համշենի հայությունն ու բնօրրանը բնութագրել պատմության հանգրվաններում, ապա մյուս երեք գլուխներում վեր է հանում այդ գավառի ու նրա հայ բնակչության ճակատագիրը՝ մշակութային գործոնի առաջնահերթությամբ, երբ այս ամենն ամփոփվում է ձեռագրերի ու դրանց հիշատակարանների անփոխարինելի տեղեկատվության մեջ, և որն էլ քայլ առ քայլ բացահայտվում է այս աշխատության էջերում:

Եվ այսպես, պատմությունն ու մշակույթը ձեռագրերում, որոնք Համշենի հայության վաղեմության ու ազնվության վկայականն են, այս աշխատության մեջ միավորվում են հիշատակարանների ամուր հենքի վրա: Շատ կարևոր է, որ հիշատակարանների իմացական, այլև անխուսափելի զգացական տարածքները հեղինակն իմաստավորում է պատմական իրողությունների համադրմամբ և փոխադարձաբար՝ այդ իրողությունները հիշատակարաններով ևս վավերացնելու մեթոդով, որի շնորհիվ ամբողջ շարադրանքը ստանում է աներկմիտ ու համոզիչ բնույթ: Լ. Սահակյանը Համշենի աշխարհը մեր առջև բաց է անում իր բնական, չեմ քաշվում այս մակդիրից՝ ռոմանտիկական ինքնության մեջ. շատ դրվագներից կարելի է հիշել Հեթում պատմիչի ուղեգրական տպավորությունն իր գրած պատմության մեջ, որ անմիջականորեն վերարտադրել է Լ. Սահակյանը: Իսկ ընդհանրապես, հեղինակը ձեռագրական պատառիկների հիման վրա հաջողությամբ է վերականգնում Համշենի պատմությունը՝ մանավանդ XIV–XVI դարերի կտրվածքով: Բայց վերադառնանք Համշենի գրչության դպրոցին, որ նախապատրաստվել և պատմականորեն ամուր հիմքեր է ունեցել առնվազն VIII դ. վերջերից, երբ ստեղծվել էր Համշենի հայկական իշխանությունը՝ Ամատունյաց նախարարական տոհմի ձեռքով: Լ. Սահակյանը համշենցի գրիչների՝ մեզ հասած ձեռագրերը սկսում է վերհանել Ստեփանոս քահանա Համշենցու հիշատակարանով՝ գրված Հռոմում, 1240 թ.: Հեղինակն այստեղ անում է զուսպ եզրակացություններ՝ Ստեփանոսի գերդաստանը նվիրված է եղել հոգևոր պաշտամունքին, և երկրորդ, ձեռագրի հռոմեական ծագումը վկայում է համշենցի հայ հոգևորականների անհերքելի առնչություններն առհասարակ հայկական գրչության և հոգևոր կենտրոնների գործունեության հետ: Կարելի է կարծել՝ առավել քան բավարար հիմք՝ XV դարի այլ ձեռագրերի քննության համար (Խաչատուր աբեղայի հիշատակարան-

ները, Աստվածատուր արեղայի, Անանուն գրչի և Սարկավագ քահանայի հիշատակարանները): Հեղինակը հատկապես ուշագրավ դիտարկումներ է անում գրիչ Խաչատուր արեղայի հիշատակարանի առթիվ (1422), որը գրչագրվել է Քոշտենց վանքում: Հեղինակն այս հիշատակարանը համադրում է իսպանացի դիվանագետ Ռ. Դե Կլավիխոյի՝ 1406 թ. վերաբերող մի տեղեկությանը, որից պարզվում է, որ Համշենը ժամանակավորապես եղել է Սպե-րի մահմեդական տիրակալի իշխանության ներքո և որ 1422 թ. Համշենը շարունակում էր գլխավորել պարոնաց պարոն Առաքելը: Կարևորն այստեղ այն է, որ Լ.Սահակյանն ամրապնդում է այն փաստը, որ XV դ. Համշենում գոյություն ուներ հայկական իշխանություն, ըստ էության հայկական այն կիսանկախ իշխանություններից մեկը, որոնք գոյատևում էին ոչ միայն բյուզանդական, այլև մահմեդական գերիշխանությունների պայմաններում:

Աշխատության երրորդ գլուխն անդրադարձնում է Համշենի XVI–XVII դդ. գրչության դպրոցի հետագա ընթացքը՝ կապված համշենահայերի շարունակվող կենսագործունեության, այս գործընթացում Եղնովիտ գյուղի Սուրբ Խաչիկ հոր վանքի, Խաչեքարա եկեղեցական վիճակի մշակութային կյանքի և համշենցի գրիչների գործունեության հետ: Այստեղ ևս հեղինակը հետևողականորեն զարգացնում է իր մտահղացման առարկայացումը երկու ուղղությամբ՝ ձեռագիր մատյանների և հիշատակարանների աղբյուրագիտական տվյալների միջոցով Համշենի և նրա հայ բնակչության պատմությունը նշված դարերում և այնուհետև՝ խնդրո առարկա գրչության դպրոցի, նրա տաղանդավոր դեմքերի արվեստի ու ոճական առանձնահատկությունների վերլուծությունն ու բնութագիրը: Այստեղ հավանաբար պետք է առանձնացնել գրիչ Կարապետ Երեցից 1499–1528 թթ. մեզ ժառանգություն հասած ձեռագիր մատյանները՝ բժշկարան, շարականներ, շարակնոցներ, մաշտոցներ, Ներսես Շնորհալու «Հիսուս որդին» և այլն, որոնց հիշատակարաններում կան ոչ միայն պատմական եզակի տեղեկություններ Համշեն գավառի պատմական իրականության, այլև կենցաղի, մշակութային ու լեզվական ինքնության և այլնի մասին: Ուշագրավ են այստեղ նաև Կարապետ Երեցի և նրա որդի Հոհաննիս Մալագի (Մալգ) հիշատակարաններում վերարտադրված ժողովրդական աղոթքները, դրանց բառամթերքի, բառախաղերի, համշենահայերի բարբառում արաբերեն ու թուրքերեն բառերի առկայությունը, որ հարատևել է առ այսօր մահմեդականացված համշենահայերի խոսքում: Վերջիններիս պատմական անցյալի և թեկուզ հավատափոխ՝ նրանց արդի սերունդների կենսաբանական ու հոգևոր ժառանգականությանը միշտ հետամուտ հեղինակը, այս էլ

Սահակյան Լուսինե, Համշենը հայկական ձեռագրերում

որերորդ անգամ, գնահատելի նախասիրություններով է մոտենում իր ուսումնասիրության առարկային՝ նպաստելով հիմնահարցի լուսաբանությանը: Նկատի ունեմ թուրքախոս մի համշենցուց նրա գրառած երեք աղոթքները՝ թարգմանական բացատրություններով հանդերձ: Ներկայիս համշենցիների մեջ աղոթքները փոխանցվել են սերնդեսերունդ՝ ի հայտ բերելով նրանց ուրույն լեզվամտածողության և բարբառի հնամենի ծալքերը, որոնք այնքան կարևոր են հայագիտության համար: Այս աշխատության մեջ զուգակշռվում են պատմությունն ու բանասիրությունը, իսկ այդ նշանակում է, որ հեղինակը հաջողությամբ է լուծել թեմայի առաջադրած՝ բազմաշերտ ուսումնասիրության պահանջները: Լ. Սահակյանն այդ իրականացնում է ամենայն պատրաստականությամբ և դրան համարժեք պատրաստականությամբ, և որը նրա ուսումնասիրության նշանակալի հաջողության գրավականներից մեկն է: Այս կտրվածքով ևս հարկ է գնահատել համշենցի գրիչների ոճի բնութագրերը (օրինակ, գրիչ Կարապետի գործածած արծակ, նաև հանգաբանական չափը), Համշենի բարբառի մասնագիտական նուրբ վերլուծությունները, ժողովրդական հավատալիքների և սովորույթների գնահատականն ու կիրառական նշանակության հեղինակային վերհանումները: Սրանց պետք է ավելացնել համշենցի գրիչների տեղեկությունների համադրումները Տամբուր քաղաքի (հետագայում՝ Համամաշեն) տեղագրության մեջ հետագա ճշտումների ուղղությամբ: Այս դեպքում ևս Լ. Սահակյանն աչքի է ընկնում հետազոտական հենքի ամրությամբ՝ վկայակոչելով մեր՝ արդեն հիշատակած գրիչ Հոհաննիս Մալազի, այլև Ղ. Ինճիճյանի և Ղ. Ալիշանի հետազոտությունների արդյունքները Տամբուրի բերդի և Համամաշենի (Համշեն) իշխանանիստ բերդի տեղագրության հարցում: Հեղինակի տեղագրական ընդարձակ իմացությունը առավել քան ընդգծվում է պատմական նյութի հանգամանալի վերլուծությամբ արված եզրակացություններով: Այս առումով հատկանշական են Եղնովիտի վանքում՝ V դարից համբավված այդ ուխտատեղիում Վարդանանց նահատակների աճյունների ամփոփման վերաբերյալ Լ. Սահակյանի հիմնավոր մտահանգումները և ի վերջո, մի շատ կարևոր հայտաբերումը: Մեր եկեղեցու սրբացրած այդ նահատակների հանգստարանը մինչև այժմ անհայտ է մնացել, որ չեն նշել ոչ Եղիշեն, և ոչ էլ Ղազար Փարպեցին՝ «ականատես եւ ժամանակակից պատմիչք նոյն եւ վկայաբանք մեր», ինչպես գրում է Մխիթարյան հայր Մ. վարդ. Ավգերյանը (էջ 181): Լ. Սահակյանն այս կնճիռը լուծում է պարզ և անհերքելի ճշմարտությամբ՝ Համշենցի գրիչ Կարապետն իր մեկ տասնյակից ավելի ձեռագրերի հիշատակարաններում շարունակաբար հայտ-

նում է, որ Ս. Վարդանանց նշխարները թաղված են Եղնովիտ գյուղի Սուրբ Խաչիկ հոգևոր անապատում, որ այստեղ «եղեալ են ի պարծանք եւ ի պահպանութիւն գաւառիս Համամշինոյ» (նույն տեղում), «ի պահպանութիւն երկրիս եւ գաւառիս մերոյ» (էջ 175) և այլն: «XVI դ. Համշենի գրիչների հիշատակարաններում տեղ գտած այս վկայությունները հիմք են տալիս եզրակացնելու, - գրում է հեղինակը, - որ Վարդանանց ուխտապահ զինվորները Պարխարի լեռները քաշվելիս իրենց հետ վերցրել են նաև նահատակված Հմայակ Մամիկոնյանի և մյուս զոհվածների մարմիններն ու հանձնել հողին՝ Եղնովիտի Խաչիկ հոգևոր հոր վանքում» (էջ 183): Եզրակացությունը հավելյալ հաստատում է գտնում համշենցի այլ գրիչների վկայությունների կրկնությամբ: Իսկապես, նշված գրեթե բոլոր հիշատակարաններում Ս. Աստվածածին և Ս. Սիրոն եկեղեցիների հետ միասին, որպես գրչության հովանավորներ, հիշատակվում են Ս. Վարդանանց նշխարները՝ մերթ առաջին, մերթ երկրորդ եկեղեցիների անուններից հետո և երբեմն նույնիսկ այն դեպքում, երբ հիշատակվում է միայն մեկ եկեղեցին՝ կողքին հիշվում են Սուրբ Վարդանանց նշխարները կամ Սուրբ Վարդանանք (տես էջ 175, 178): Եվ այս տեսակետից ամենևին էլ պարթևտիկ չի հնչում հեղինակի ընդհանրացումը՝ հիշատակարաններին «բնորոշ դարձած ազդեցիկ տողերը... ցույց են տալիս գրչի հայրենասիրությունը, պարծանքի ու հպարտության զգացումը պատմական անցյալի և Վարդանանց հերոսների հանդեպ» (էջ 217):

Աշխատության աղբյուրագիտական հիմքերը (ծեռագիր հիշատակարաններ, մատենագիրներ, օսմանյան սալնամեներ և արխիվային այլ նյութեր) և օսմաներենի ու թուրքերենի հուսալի իմացությունը հեղինակին հնարավորություն է տվել հանգելու տեղագրական ու ժողովրդագրական տեսակետից լուրջ եզրակացությունների: Դրանց նշանակության մասին արդեն ասվել է և այստեղ պետք է ավելացնել Համամաշենի իշխանանիստ բերդաքաղաքի տեղի ստուգիվ ճշտումը (Քալե-ի բալան՝ իր շրջակա բնակավայրերով), XVII–XVIII դդ. համշենցիների բռնի մահմեդականացման գործընթացի մեջ առանձնահատուկ՝ 1716 թվականի ամրագրումը (էջ 199), Համշենը օսմանյան վարչաքաղաքական համակարգում՝ ընդհուպ մինչև 1869 թ. ոչ լրիվ և տխուր վիճակագրությունը Համշենի նահիեում (գյուղախումբ)՝ հայկական 24, մահմեդական 1543 տուն, ըստ շնչերի՝ 88 հայ, մահմեդական՝ 5869, էջ 203):

Թուրքացման ավերածությունը նույնչափ ամայացնող տեսական հիմնավորում է պահանջում, որին, ինչպես ցույց է տրվում աշխատության մեջ, չհապաղեցին ձեռնարկելու թուրքական պատմակեղծարարները: Այս իմաստով

Սահակյան Լուսինե, Համշենը հայկական ձեռագրերում

հիմնավոր են Լ. Սահակյանի առարկումները թուրք պատմաբան Հ. Բոստանին, որը հանդես էր եկել համշենցիների հայկական ծագումը ժխտելու ճիգերով: Անդրադարձ կա ևս մեկ կեղծարարի՝ Ֆ. Քըրզըռօղլուին, որը խեղաթյուրելով պատմական փաստերը Ամատունի նախարարների մասին, ոգի ի բռին փորձում է ցույց տալ նրանց իբր, թուրքական ծագումը: Միաժամանակ, Լ. Սահակյանը քննում է Համշենի հայերի թուրքացման վերաբերյալ 1770-ականի մի կարևոր սկզբնաղբյուր՝ Մխիթարյան հայր Պ. վարդ. Մեհերյանի ձեռագիր հուշագրությունը, որտեղ լսելի են այդ ավերիչ երևույթի արձագանքները, համշենցիների հիշողությունները և հարգանքը իրենց նախնիների հավատի ու նրանց ծեսերի նկատմամբ: Այս, ինչպես և իր աշխատության բազմաթիվ դրվագներում, եթե չասենք ամբողջ աշխատության վերաբերյալ, հեղինակն ընդգծում է Համշենի հայերի հայկական անցյալի դիմագիծն ու նկարագիրը:

Աշխատության վերջին գլխում քննարկվում է համշենցի հոգևորականների գործունեությունը հայ գրչության այլ կենտրոններում, դարձյալ ըստ հիշատակարանների՝ 1401–1579 թթ. ժամանակահատվածում: Համշենցի հոգևորականները գործել են Հայաստանի և գաղթօջախների տարբեր վանքերում և գրչության կենտրոններում՝ ոչ քիչ դեպքերում հանդես գալով որպես բանաստեղծներ՝ չափածո տողերով և շարունակելով մեր միջնադարյան գրական ավանդույթները: Հատկապես Հովհաննես ռաբունապետի (գործել է 1440–1490-ական թթ.) մասնավորմամբ Լ. Սահակյանին հաջողվել է վերհանել համշենցի մշակութային գործիչների համագգային ընդգրկումներն ու թողած խոր ազդեցությունը իրենց և իրենց միջավայրի շրջանակներից դուրս գտնվող հայկական հոգևոր-կրոնական հաստատությունների գործունեության վրա: Ընդամին, հեղինակը համշենցի հոգևորականներին բնութագրում է ոչ միայն իրենց ավանդած հիշատակարաններով, այլև այդ բնութագրերը առավել համոզիչ է դարձնում այլ, ամենևին էլ ոչ համշենցի գրիչների գեղարվեստական ու պարզապես մեծարանքի խոսքերով: Ինչպես միշտ, հեղինակը. հավատարիմ է մնում իր ոճին՝ համշենցի այս հոգևորական գրիչների ու նրանց գրչակիցների տողերի արանքում բացահայտելով ու շարահարելով Համշեն հայկական գավառի շուրջ 180-ամյա պատմությունը:

Աշխատության աղբյուրագիտական հոսքի մեջ հարկավոր է ընդգծել ոչ միայն հիշատակարանները՝ իրենց անգնահատելի նշանակությամբ, այլև արխիվային հարուստ՝ Երուսաղեմի հայոց պատրիարքարանի ձեռագրատան, Ստամբուլի Գլխավոր վարչապետական արխիվի և այլ պահուստների փաստագրական տվյալները, որոնք շարադրանքին տալիս են արժանահավա-

տություն և հետազոտական արդյունքների համոզություն: Սրա հետ միասին, կարծում եմ, հեղինակը երբեմն անվերապահ մոտեցում է ցուցաբերում վիճահարույց որոշ հանգամանքների նկատմամբ: Եթե, ըստ Մ. արք. Օրմանյանի, Կ. Պոլսի հայոց պատրիարքը, իբրև «Բոլոր Թյուրքիոյ հայ ազգութեան գլուխ, վարչական վերին հսկողութիւն ունի բոլոր Թիւրքիոյ մէջ գտնուող հայ վիճակներուն վրայ» (էջ 118), ապա այդ դեռևս չի նշանակում, որ XV դ. կեսերին և 1461 թ. Կ. Պոլսի պատրիարքության կազմավորումից ի վեր «պետք է որ Համշենի վանքերն ու թեմը ևս անցած լինեին Պոլսո պատրիարքության ենթակայության տակ» (նույն տեղում), ինչպես կարծում է Լ. Սահակյանը: Ընդհակառակն, Սարկավագ քահանայի հիշատակարանում (1489) Կ. Պոլսի պատրիարքն ամենևին չի հիշվում, մինչդեռ հիշվում են նախ Սարգիսը (Մյուսայ, Էջմիածնի կաթողիկոս 1484–1515) և ապա Հովհաննեսը (Հովհաննես Թլկուրանցի, Կիլիկիայի կաթողիկոս 1489–1525), ինչը ամրագրել է հեղինակը (էջ 114–115): Սարգիս կաթողիկոսի առաջնահերթ նշումը, այսուհանդերձ, ցույց է տալիս, որ Համշենը, գրեթե առավելապես, 1489-ի կողմերը պետք է գտնվեր Էջմիածնի կաթողիկոսության տնօրինության ներքո, իբրև թեմ, որ գլխավորել է Գրիգոր վարդապետը և որը նույնպես հիշվում է այս հիշատակարանում: Ինքը՝ Կ. Պոլսի պատրիարքությունը XV դ. երկրորդ կեսին գտնվում էր մերթ Էջմիածնի, մերթ Կիլիկիայի աթոռների ազդեցության ներքո, և այս նույն երևույթի մի դրսևորումն ենք տեսնում Սարկավագ քահանայի կողմից երկու կաթողիկոսների անվան հիշատակության մեջ:

Հարկ է արժանին հատուցել Լ. Սահակյանի գրքի ճաշակով և բովանդակությամբ համահունչ՝ զուսպ ձևավորմանը, առանձնապես ներդիրների առկայությամբ, որը մի հայտնի չափով անառարկելի է դարձնում հեղինակի դրույթների ճշմարտացիությունը:

Հետազոտության բնույթին վայել կիրթ ու մշակված հայերենով շարադրված այս աշխատության մեջ շատ քիչ են անհաջող ձևակերպումները և վրիպակները, որոնց մի մասը, թվում է, պատահականություն են, այնպիսի պատահականություններ, որոնք, այնուամենայնիվ, համառություն ունեն սարդելու այս կարգի շատ բարձրորակ արժեքների մեջ ևս («նորովի մեկնաբանելով ուշադրությունից դուրս մնացած խնդիրները», էջ 77, **երդմնեցուցանեմ** գրաբարյան ձևը փոխադրվել է՝ **սաստում եմ**, էջ 132, մինչդեռ ունենք դրա արդի հայերեն անվրեպ համարժեքը՝ **երդվեցնում** եմ և այլն):

Ամփոփենք. Լ. Սահակյանի աշխատությունը լուրջ ներդրում է հայագիտության անդաստանում, որ պայմանավորված է բուն իսկ համշենագիտությամբ:

Սահակյան Լուսինե, Համշենը հայկական ձեռագրերում

յան սահմաններն ընդարձակելու, այս բնագավառում մեր հատվածական իմացությունը լրացնելու և ամբողջացնելու՝ Լ. Սահակյանի հույժ գնահատելի կարողություններով: Ստեղծվել է մեր ժողովրդի պատմությունը վերարտադրող մի գործ, որ, մեր համոզմամբ, արդեն ներհյուսվում է Երուսաղեմի Ս. Հրեշտակապետաց եկեղեցու բակում իր իսկ հեղինակի հայտաբերած՝ Համշենցի Հովհաննես ռաբունապետի հիշատակը հավերժացնող խաչքարի մնայուն արժեքին:

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ